ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ (2)

աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունների բարելավման նպատակով

Փաստաթուղթը մշակվել է՝

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության պատվիրակմամբ՝ Եվրոպական միության համաֆինանսավորմամբ իրականացվող **«Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն»** ծրագրի շրջանակներում **սեպտեմբերի 22-ին** հրավիրված **աշխատանքային խմբի քննարկման արդյունքում:**

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Երևան - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 5
ՀԱՎԵԼՎԱԾ 9

ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքականության փաստաթղթերը նախագծելու նպատակով նախ մշակվել են հարցադրումներ՝ ուղղված ավանդական զբաղվածության և գիգ տնտեսության շրջանակում աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորմանը, ռիսկերի կառավարմանը, աշխատաշուկայի ներկա պահանջներին համընթաց կողմերի իրավունքներն ու պարտականություններն իրացնելու գործընթացում խնդիրների լուծման իրավական դաշտի վերանայմանը:

Այդ նպատակով համագործակցություն է սկսվել ոլորտային գործատուների միությունների, առանձին գործատուների, մարդկային ռեսուրսների մասնագետների և շահագրգիռ այլ կողմերի հետ: Կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, անհատական զրույցներ, որոնց ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա մշակվել են աշխատանքային իրավահարաբերությունների բարելավմանն ուղղված քաղաքականության բարելավման առաջարկներ:

Սույն առաջարկի մշակման նպատակով հրավիրված հանդիպում – քննարկումն անցկացվել է սեպտեմբերի 22-ին, 2022թ.: Հաշվի առնելով աշխատանքային իրավահարաբերություններում հաճախակի հանդիպող փոփոխությունները, իրավասու պետական կառավարման մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2022թ. նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ ԱՕ) շրջանակում քննարկումները շահագրգիռ կողմերի հետ շարունակվել են մինչև դեկտեմբեր ամիսը:

Առաջարկները կշրջանառվեն և կներկայացվեն պատկան մարմիններին և շահագրգիռ կողմերին՝ ակնկալելով դրանք դիտարկել իրավական դաշտի բարեփոխումների շրջանակում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնական նպատակն է **«Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն»** ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի

ներգրավմամբ ձևակերպել քաղաքական միջամտությունների առաջարկների փաստաթուղթ՝ իրավասու մարմիններին ներկայացնելու համար:

Հիմնական խնդիրներ են՝

- քննարկել աշխատանքային իրավահարաբերություններին վերաբերող համաշխարհային և Հայաստանի աշխատաշուկաների հիմնական մարտահրավերները,
- դուրս բերել գործատու – աշխատող հարաբերություններում կանխատեսվող և հաճախ հանդիպող, իրավական կարգավորում պահանջող ռիսկերը,
- քննարկել մասնակիցների առաջարկները,
- արձանագրել աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման նոր փոխակերպող լուծումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջարկները մշակվել են հրավիրված աշխատանքային հանդիպում-քննարկման ընթացքում: Նախապես մշակված բաց հարցադրումների միջոցով մասնակիցները նախ ներկայացրել են աշխատանքային իրավահարաբերություններում ամենահաճախ հանդիպող խնդիրները և ապա՝ իրենց կողմից առաջարկվող լուծումները, կարգավորման առաջարկները:

Աշխատանքային քննարկմանը մասնակցել են տարբեր ոլորտի պատասխանատուներ, գործատուների, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետներ և այլք:

Հանդիպման ընթացքում քննարկվել են թեմաներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Ավանդական զբաղվածության շրջանակում գործատու-աշխատող իրավահարաբերությունների կարգավորման խնդիրներն ու լուծումները:
- Ժամանակակից ԳԻԳ տնտեսություն. Աշխատաշուկայի համաշխարհային զարգացումները համավարակից հետո աշխատանքային նոր հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրներն ու փորձերը Հայաստանում:

Հանդիպում-քննարկումից հետո շարունակվել են անհատական զրույցներն ու էլեկտրոնային նամակագրության միջոցով կապի պահպանումը մասնակիցների հետ՝ հստակեցնելու ներկայացված առաջարկները:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Վերանայել և նոր կարգավորումներ սահմանել ԱՕ Հոդված 249-ով՝ «Պարտադիր բժշկական զննություն», նախատեսված «գործատուի միջոցների հաշվին» պայմանի հետ կապված, այն հիմնավորմամբ, որ պարտադիր բուժզննության կազմակերպման համար ֆինանսական միջոցների նախնական տրամադրումը խնդրահարույց է, քանի որ երբեմն ապագա աշխատողը բուժզննությունն անցնելու հետո չի ցանկանում պայմանագիր կնքել: Առաջարկվում է պարտադիր բժշկական զննության համար պատասխանատվություն սահմանել անձի համար, ով աշխատանքի ընդունվելուց հետո կստանա համապատասխան փոխհատուցում, կամ աշխատանքի անցնելուց հետո կանցնի բուժզննում:

- Վերջինիս համատեքստում առաջարկվում է վերանայել ՀՀ Կառավարության 15 հուլիսի 2004 թվականի N 1089-Ն որոշումը (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՈՒ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՍ) ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԻ, ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ, ԶՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԻԳԻԵՆԻԿ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ):

- Առաջարկվում է վերանայել ՀՀ կառավարության 2 դեկտեմբերի 2010 թվականի N 1698-Ն որոշման (ԾԱՆՐ, ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ, ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ, ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 1599-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 876-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ) Հավելված 1-ի սահմանման սկզբունքներն այն հիմնավորմամբ, որ արագ փոփոխվող աշխատաշուկայի ներկա պայմաններում նոր մասնագիտությունների և զբաղմունքների առաջացմամբ պայմանավորված վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների և պաշտոնների ցանկը շուտ է կորցնում իր արդիականությունը: Բացի այդ, սույն որոշմամբ սահմանափակվում է նաև նոր մասնագիտությունների առաջացման դեպքում իրավական կարգավորման ճկունությունը: ՈՒստի, առաջարկվում է նաև հնարավորություն տալ գործատուներին ներկայացնելու մասնագիտություններ և/կամ կիրարկման ընթացքում համաձայնեցնելու դրանց ճանաչումը որպես ծանր, վնասակար արտադրությունների մասնագիտություններ և պաշտոններ:

- Սահմանել որոշակի իրավական կարգավորումներ մի շարք ոլորտներում (այդ թվում՝ կրթամշակութային, արտադպրոցական, տարբեր ծառայությունների և այլ) գործունեության տեսակից ելնելով հանգստյան օրերը (շաբաթ և կիրակի) աշխատանքային դիտարկելու և այդ օրերի բնականոն աշխատանքի համար աշխատողին վճարելու որպես աշխատանքային օր՝ դրանք զուգահեռ հանգստյան սահմանելով շաբաթվա մեկ այլ օր:

- Աշխատաժամանակի տևողությունը կրճատելու իրավական հիմքեր ստեղծել նախադպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողների համար այն հիմնավորմամբ, որ նախադպրոցական հաստատությունները գործում են մինչև ժամը 17:00:

- Վերանայել դեռ 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված «ՀՀ զբաղմունքների դասակարգիչը» և «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչը» այն հիմնավորմամբ, որ գործատուները պաշտոնների անվանացանկերի կազմման ժամանակ չեն կարողանում համադրել ներկա աշխատաշուկայի պահանջներին համապատասխան պաշտոնների անվանումները և դրանց ներկայացվող հիմնական պահանջները: Այդ պատճառով գործատուները հիմնականում օգտվում են միջազգային դասակարգիչներից կամ կամընտրական անվանումներ տալիս պաշտոններին:

- Օրենսդրությամբ սահմանել և որոշակի կարգավորումներ նախատեսել ժամանակակից «ԳԻԳ» տնտեսության պահանջներով լայն տարածում գտած աշխատանքային հարաբերությունները: Սա ազատ շուկայի համակարգ է, որն

ինչպես միջազգային աշխատաշուկաներում, այնպես էլ Հայաստանում դարձել է առավել ակտուալ վերջին տարիներին: Մասնավորապես.

- Ֆրիլանս աշխատանք (ինքնաշխատ մասնագետներն են, ովքեր ազատ են իրենց աշխատաժամանակի, աշխատավայրի, պայմանների ընտրության հարցում): Շատ հաճախ աշխատանքային հարաբերություններ են ստեղծում ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ:
- Տնից աշխատանք (work from home), երբ գործատուի հետ պայմանավորվածության համաձայն, սովորաբար՝ ժամանակավոր, աշխատակիցն իր հիմնական պարտականություններն իրականացնում է տնից, աշխատանքային նույն պայմաններով ու երաշխիքներով, ինչպես աշխատավայրից աշխատանքի դեպքում:
- Հեռավար աշխատանք (Remote work), երբ աշխատակցի պայմանագրային գործառույթների իրականացման համար սահմանված չէ հստակ աշխատավայր: Աշխատակիցը կարող է ծառայություններ մատուցել նաև երկրից դուրս վայրից: Հեռավար աշխատակիցը սովորաբար ունի նույն իրավունքներն ու պարտականություններն, ինչ որ գրասենյակում աշխատող իր գործընկերը:
- Համակցված աշխատանք (Hybrid work), երբ աշխատակիցն իր պայմանագրային գործառույթների իրականացման համար կարող է աշխատել և աշխատավայրում և աշխատավայրից դուրս:

Պետք է փաստել, որ հանդիպում-քննարկման ժամանակ մասնակից գործատուների կողմից բարձրացված ամենախնդրահարույց հարցադրումները վերաբերում էին համավարակից հետո շարունակվող հեռավար կամ համակցված հեռավար, տնից աշխատանքի իրավական կարգավորումների պահանջին: Սակայն սույն փաստաթղթի նախագծից հանվել են մասնակիցների առաջարկները, քանի որ դրանց գերակշիռ մասն արդեն ներառված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ս/թ դեկտեմբերին e-draft հարթակում շրջանառված «ՀՀ ԱՕ-ում լրացումներ և փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում» (այսուհետ՝Նախագիծ): Ստորև ներկայացվում են այն առաջարկները, որոնք էլեկտրոնային նամակարգրության արդյունքում մասնակիցներից ստացվել են վերոնշյալ նախագծի վերաբերյալ:

- Առաջարկվում է Նախագծի Հոդված 2. («Հոդված 106.1. Աշխատանքային պարտականությունների կատարումը հեռավար կամ համակցված հեռավար եղանակով) խմբագրված տեքստում վերանայել «պարտականությունների **մի մասը**» արտահայտությունը և հստակեցնել: Քանի որ ստացվում է, որ հեռավար եղանակով կատարվող աշխատանքային պարտականությունները պետք է

հստակ տարանջատվեն աշխատավայրում կատարվող աշխատանքային պարտականություններից, մինչդեռ իրական նպատակն այն է, որ աշխատողը հնարավորություն ունենա միևնույն աշխատանքային պարտականությունը (օրինակ՝ հաշվապահի դեպքում՝ տարեկան հաշվետվության կազմումը) իրականացնել հեռավար եղանակով աշխատելու ընթացքում, կամ գրասենյակում գտնվելիս, կամ մասամբ հեռավար և մասամբ աշխատավայրից:

- Առաջարկվում է Նախագծի Հոդված 2. («Հոդված 106.1. Աշխատանքային պարտականությունների կատարումը հեռավար կամ համակցված հեռավար եղանակով) խմբագրված տեքստի կետ 3), ենթակետ 9-ում «պետք է ապահովեն» արտահայտությունից հետո ավելացնել. «աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև..» և շարունակել տեքստը ինչպես գրված է Նախագծում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մասնակիցների ցանկ